

ձեր Յարգութեան արժանաւոր պատիւ չըկրցայ ընկել , որոյ վասն ներւ զամփա ըլլանիդ կը խնդրեմ : ո

Ոսք ելլաղով Պ . Հիւպատոսը ըստ . “Ձեր խօսակցութիւններն երբէք ինձ գլասացւանք չպատճառեցին . մանաւանդ ուրախ եղայ ձեր ինձ տուած օրինաւոր տեղեկութիւններէն , որոնց մէջ քաջ նկատեցի որ աւելորդաբանութիւնները ըլ կար , և քաջ ճանաչեցի ձեր հոգւոյն աղնըւութիւնն , որ ձեր ազգային միակ պարտաւորութիւնն ճանաչելով երբէք չեք զիջանիր իմ միակ խնդիրս ընդունելու , հաստատելով թէ վնասակար է ձեր կրօնիքին ձեր ազգին և այլն . ձեր ազգասիրութիւնը ձեր կը թօնասիրութիւնն ամենայն պարագայիւք կը գովեմ , և իմ խնդիրքս ընդունելուուդ համար ալ այս կը ցաւիմ այլ չեմ յուսահատիր բոլորովին , կը յուսամեկ կ'աշխատիմ և կը թախսան ձեմ զձեր Ըմենապատուութիւնը , որ գուցէ համոզել կարողանամ , որս ելլով վերջացուց : Իսմ'ուելու ժամանակ Պ , Հիւպատոսը խնդրեց որ եթէ կտրելի է համան ըլլայ սուրբ Յափովեայ եկեղեցին բանալ տալու , որ ուխտ և երկրպագութիւն ընէ :

“ Հրամանի կարօտ չէ , ամեն ժամանակ բաց է լսաւ Ա . Պատրիարքը , բոլոր ազգաց ուխտաւորաց , երբ միամուաբար կուգան . բայց ձեր Յարգութեան առաւել պատիւ ընկելու համար ես անձամբ կիջնամյեկեղեցին ձեր հետ : ո

Եւ ՚ի միասին իջեալ սուրբ Յակովայ եկեղեցին , անձամբ ցոյց կուտար Ա . Պատրիարքն և պէսք եղած տեղեկութիւններն ՚ի պատիւ Պ , Հիւպատոսին . և երբ յանուն սուրբ Դիմադրին նուիրուած սուրբ խորանին եկան , ալ հա այս է լսաւ Ա . Պատ

րիարքն Հայոց ազգին վեհանձնարքար ՚ի չնորհու Ա ասին կրօնաւորաց տարիին միանգամ պատարագելու թոյլատը բուած սուրբ սեղանը , որոյ յարգը ըդ գիտցան՝ բայց եթէ երբ կորանցուցին իրենց եղած շնորհքը և մարդասիրութիւնը , ո

(Ըստունակիլ)

Լ.03Ս ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

(Հարունակութիւն . տես թիւ 10)

Վզգաց պատմութիւնը՝ մարդկութեան կըներկայացնէ փառաւոր գործովք իւր անունը անմահայնող աշխարհ մի՛ որուն ՀԱՅԱՍՏԱՆ անունը հայ պատմութեան թերթերու մէջ ոսկեգրօշմ կը փայլի :

Ծնաշառ և հնապատում մատեւնիք այս աշխարհը մարդկութեան մայր և արուեստից որորան կը խոստովանին :

Ուարդկութիւնն ՚ի զարգացումն առաջնորդող լոյնը՝ հսս ծնաւ առաջն մարդոյն հետ , հսս և մարդկութիւնը երկիցս օրհնուեցաւ այն անմահ գերագոյն Վէն՝ որ մարդոյն բուն արարին և աստուտծն էր :

Հայաստան այս աստուածաշնորհ լոյնը յարգեց գրեթէ միշտ , լուսով զարգացաւ , լուսով վերջապէս ամբարտաւան գլուխներ խոնարհեցնելով մարդկութեան համակրութիւնը եւս ստացաւ :

Հայոց բարէ , որ այսօր հայ պատմութիւնը՝ Հայաստանի նախնի դարուց զարգացման և լուսոյ նահատակաց լոկ անուանքն մեզ կ'աւանդէ , իսկ նոցա գործոց և փառաց վրայ կը լուէ :

Նութիւնը , ժամանակին սուր

ժանիքը երռնաւորաց թուրն ու հուրը՝ զացած են հայ պատմութեան՝ աւանդել յետագայ հայ սերնդեան՝ հայ հայրենեաց փառաւոր դարուց անմահ յիշառակները :

Հայկայ, Արամայ, Տիգրանաց, Վաղարշակայ և Արտաշէսից լոկ անուանց չնորհիւն են որ այսօր հայ սրտերու զգացման թելեր թրթռալով յոյս ՚ի սիրտ լըս կ'աղաղակեն :

Այս բարերարք հայրենեաց ըստեցան . որովհետեւ լուսով գործեցին, լուսով հայրենեաց պայծառութեան հսկեցին . լուսոյ չնորհիւ վերջապէս կարողացան անմահաց նել իրենց անուանքն յաւիտեան :

Հին դարուց հայը՝ այս իւր բարերարաց չնորհիւներ, որ կրցաւ իւր իրաւունքները երկար ատեն պաշտպանել, և իմանալ իւր ոռորք պարտաւորութիւնքն՝ որ առ Աստուած և առ հայրենիս :

Հայաստանցի սրտերէ բղիսած երգոց պատառիկ մասեր՝ զորս հայ պատմութիւնը գորովանօք մեզ աւանդան է ո թէպէտ չեն կարող Հայաստանի հին դարուց լուսաւորութեան երաշխաւորել, բայց հապարտուոր տարիի չափ Պայտղատուց անընդհանուր շարունակութիւնը, և Հայաստանի իւր անկախութիւնը պաշտպանելք՝ բաւական կրնան երաշխաւորելու:

Ո երջապէս հնութեան՝ պատճութեան զացտեղը մենք չենք կտրող ՚ի յայտ ածելու Հնութեան քողին տակ պահուած յիշառակները գերբնական ձեռքի մի կարօտ են, որոյ չնորհիւ միայն յայտ կընան գալ ճշմարտութիւնքի:

Բայց օս միայն անուրանալի է, որ Ազգ մի երբ իւր իրաւունքները պաշտպանելը գիտէ, չըկնար ըսուիլ թելուսոյ մէջ կ'ապրի :

Բայց Հայաստան ՚ի սկզբանէ ան-

տի ոչ թէ միայն իւր իւրաւունքները ուրիշն ըլ զրհած՝ այլ և ուրիշն իրաւունքն եւս վեհանձնաբար պաշտպանած կը տեսնուի գրեթէ միշտ, որոնք իւր գթութեն ապաւինած են :

Մքաջնոյն կը վկայեն Հայկայ, Արամայ, և այլոց շատ քաջաց նահատակութիւնքը, և Արայի արիւնը՝ որ ողջախոհութեան սեղանի լիսայ թափուեցաւ :

Իսկ երկրորդին՝ այսինքն օտարաց պաշտպան կանգնիլը՝ ինչպէս Աշխամելեքայ . Անասարայ և շատ այլոց եւս. ասոնք տգէտ և անըստ մարդկանց գործեր չեն :

Նեթանոսական դարուն մէջն ալ Հայաստան իւր փառաց գրօններն սպարզած Վասեաց գագաթէն աշխարհի պատգամներ ալ երբեմն որոտածէ, և Հռովմէական հզօր պետութիւր շատ անգամ սարսափեցուցած :

Հայաստան թուր ՚ի ձեռին մաքառածէ միշտ վատ բռնաւորներու դէմ:

Ո երջապէս Հայաստան աշխարհի ամեն նշանաւոր գործոց և փառաց մէջ ալ բնաւ անմասն դանուած չէ :

Այսիւեմօր մը որ Հայաստան երբ կը իսորհէր Հռովմէական հզօր պետութեած վերայ իւր բարկութեան շները տեղալ և իւր արդար վոէժը լունել, որ մը երբ իւր վեհափառ սրբայն (Արգար) հայրենեան հրովարտիկ վառութեած՝ Պարսկաստանի խորհերը կը վաղէր հոն իւր համարիւն եղացարց սրտերն եւս վառելու եւ բարբոքելու այն հրովարտիկ կը տուշորուէր, վերջապէս այն փառաւոր օրը կ'ըսեմ երբ Հայաստան կը պատրաստուէր իւր սուրբ արիւնը թափել իւր իրաւանց սպաշտողանութեան համար, յանկարծ Հրէաստանի Գող գոթայ լերին վկայ արիւնը լու-

այ նահատակ մի կը նշմարէ , որ իրը սճրագործ դատապարտեալ մի անարդ խաչ մի վերայ տարածուած հոգի կ'աւանդէր , կ'ափչի . Իսյց արքանց մէջ լողացող այս լուսոյ նահատակի շրթէն յանկարծ բարբառ մի , ձայն մի է որ կը թռչի , կը սրանսոյ և ահա Հայաստանի Երկնից ազատ կամարաց տակի կ'ողբուանաց , « Յու լոյս եկի յաջ խարհո : Եւ Հայաստան կը կրկնէ » Յու մեք պատրաստք Երկիրպատանել լուսոյ , կը սէ և կ'երկրպատէ անմիջապէտ :

Այս օրէն Հայաստան՝ այս լուսոյ եւս նահատակներ կ'ունենայ , որոց արեամբ Հայաստան գրեթէ կ'ողողի . Թագէի և Անդխոց արիւնները Հայաստանի մէջ լուսոյ սերմեր կ'ցանեն , որք կ'ընձիւ զին Տրդատայ օրով սուրբ Գրիգորի ձեռամբ , և Հայաստան համօրէն կ'երկիրպատէ այս ժամանակ այն լուսոյ Նահատակի անուան՝ որ մարդկութեան տաճարաց մէջ լոյս սփռելու համար աիւնը թափած էր ՚ի սէր մարդկութեան :

Իսյց սա Ճշմարիտէ որ քրիստոնէական է . դարն է որ Հայաստանի բուն լուսադարը կը համարուի :

Այս դարու մէջ ունեցաւ Հայաստան Ամակ , Անօրովկա և սոցա աշակերտք , իւր լուսոյ սրբազնն նահատակները , որոց շնորհիւ բարսյական լոյսը և հայ գրականութիւնը շատ զարգացաւ ՚ի Հայաստան :

Իսյց հազիւթէ Հայաստան իւր այս բարերարաց շնորհիւ սկսաւ խըլլուիլ , և իւր ազատ աշուըները շին լովլոյս նշմարել , ահա յանկարծ հեթանոսական խաւարը՝ որ հազարաւոր տարիէ ՚ի վեր ընդհանութիւնը հորիզոնը պատուած ըլլալով կը թագաւորէր , գուալով կ'եցիր որոտաց . բայց Հայաստան անվեհէր կրկնեց՝ « պիտի յառաջադիմէմո » :

Ասրաւափեցաւ խաւարը , վասն զի ախոյշեանը լոյսն է , որ վասն զի նշմարեց այն վիհը՝ որ իւր դատապարտութեան համար պատրաստած էր ամենակարսող Ձեռք մի . Ուստի անիծից շանթեր տեղաց . իսկ Հայաստան՝ « Օրհնից ուխր : Անհատու թրեր շղացուց . իսկ Հայաստան՝ « Պարանոց երկնեցուց : Անհաշշուկ տէգեր նետեց . բայց Հայաստան՝ « Իւր կուրծքը բացաւ . Եղթայներ պատրաստեց . բայց Հայաստան անոնցմով լուսոյ կապուիլ յուսաց . Իանտերը լուսոյ օմարան համարեց : Վերջապէս խուարը մահ գոռաց . իսկ Հայաստան ծափ զարնելով նոյն մահուամբ յաւիանական և անմահ կեանք ստանալը պատասխանեց . Կատաղեցաւ խաւարը և սկսաւ պատերազմիլ .

Վկցնծութեանս , Բնշկընշմորեմ . պատերազմ , լուսոյ և խաւարի . հազարաւոր հոգիներ տեսէք , որք յոյս ՚ի սիրու ահա կը թռչիլն լուսոյ աշխարհ մի , ահա ամբողջ Հայաստան մէջ կը լողաց իւր իրաւանց պատշաճանութեան համար . տեսէք արիւնլուայ Աստուած մի՝ ահա հոն ասու և անդսաւառնելովլուսոյ պատկներ կ'տեղայ : Լուսովլ բորբոքուած սրտեր կը խրախուսուին . « Աստուած և Հայութէնիք վասն ձեր մեռանիմբ , ո կ'աղաղակեն և կ'իւնան :

Իսյց դոցա անուանքն կ'անմահանան , հայ պատումութիւնը զանոնք փառաւորելովլ Անդաններ , այս անմահ անունը կ'աւանդէ յետագայ հայ սերնեան , և երկնից Նրդարութիւնը կը պսակէ զանոնք լուսեղէն պսակներով :

Իսկ այդ ովէ , որ ՚ի ձի խրոխտ աշտանակեալ սաղաւարտ ՚ի գլուխ , վահան ՚ի կուրծս , թուր հատու ՚ի ձեռին , այդ ահուելի պատերազմի արիւ-

նաներկ դաշտի մէջ ազտուորէն լըս
կը գոռայ : — Վզատ հայ մի է : Դորա
ազտութեան հայրենեաց բարբառը՝
Ուսիս խնդութեամբ կը կրկնէ , դո
րա առջև խաչանիշ դրօշեր կը ծածա
նին , որոց իւրաքանչիւրին վրայ Վաս
ուած և իւրաւունք՝ այս վեմ բառե
ը կը փայլին Վեհէ դա . կարմիր իւր
գէմքը : Վարդանէ դորա անունը :

Խակ այդ ովլէ , որ մի ձեռքը խաչ
և ՚ի միւսում աւետարան մի իւր
կուրծքը բայցած զայաստան ամբողջ
կը խրախուսէ , դորա օրհնեալ ճակա
տու վրայ դրօշմ մի կրփայլի , լըս . խակ
իւր սրտի վերայ . յըս :

Խուալ բորբոքեալ զինուոր մի է
դա , Վասուածութեան և սրբութե
պաշտօնեայ արդար , Վեւննդ և դո
րայն անուն :

Այս երկոցունց քաջալերին բար
բառէն կը խրախուսի Հայաստան և
կը պատերազմի անվեհեր , և լցոն սո
ցա շնորհիւ վերջապէս արեան և ար
տասուաց ծովու վրայ իւր յաղթաւ
կան դրօշ ծածանելով յաղթութիւն
կը գոռայ :

Եյս օրէն Հայաստան լուսոյ հա
մար նահատակւիր՝ իւրեան փառք կը
համարի , և լուսոյ նահատակաց յիշա
տակը պատաւելը՝ պարծանք : Ուստի
Հայաստանեայց Ա . Վէկեզեցին այս
տարի ևս Փետրվար 47 օրը փառաւու
րապէս կատարեց սոցա սուրբ յիշա
տակը և պիտի կատարէ յաւիտեան :

(Վարդանիւնիւն)

ՔԱՐԴ ՄԻ ԽՈՍՔ ԱԶԳԱՑԻՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Վզգերնուս կը թութեան մասին
ինչ վեճակի մէջ ըլլալը , զոր հիմայ կը
տեսնանք՝ քան կամ աւելի եւս երե
սուն տարիէն առաջ չենք տեսնար .
ինչու համար . վասն զի այն դաստի

արակութեան և կրթութեան սէրը
և փապագը այն միջոցին չկար աղդեր
նուս մէջ , ինչողէս որ հիմայ կայ . սա
կայն և այնպէս տակաւին ազարդիւն ,
և քիչ օգտակար չասեմ անօդտակար

Վոգութ և անպտուղէ աղգաւ
յին դաստիարակութիւն մը , երբ որ
դաստիարակիչ վարժապետը առ իր
պաշտօնն ունեցած պարտքերը կամ
անհոգութեամբ , կամ թիւր լնթաց
գով կը կատարէ , այսինքն փոխանակ
աղդէն իրեն հաւատացած ապագայց
ին համար պատրաստելի գանձը , յոյ
որ՝ մատաղ մանկանաց սիրուերը ու
միտքերը դաստիարակելու , աւելի ա
նանց լեզուները կրթելու հոգ կը տա
նի . փոխանակ բարի և կատարեալ ա
ռաքինի վարուք իր աշակերտաց օրի
նակ լնելու , շատ անդամ իր զեղս
և ապօրէն կացութեամբ անանց դե
ռափիմիթ բարյականութիւնը զեղծ
մանց մէջ տոտպալելու պատճառու կը լլայ
Վզգային կրթութիւն մի ապարդիւն
կրլայ , երբոր դաստիարակելի ման
կուեայ ծնողը առ այն ունեցած
պարտքերնին թերեւս կամաւ չը ճա
նաչելու իր զարնեն , և այս անդիտու
թիւնս այնքան մէծ յանցանքէ : որ
պէս թէ մէկը իր ձեռք իր զաւակը
մեռցնէր : Երբ որ թատրոնի , զեօսան
քի և արբեցութեան համար , և ձիոց
տանց և հանգերձից աւելորդ և ան
պատշաճ զարդուց համար հազարով
տաս հազարով ստակ աւելի յօժարու
թեամբ կը վասնեն քան թէ իրենց
զաւակները “քարը քարի վրայ նստե
լու” անկրթութեան յանցանքէն ա
զատելու համար՝ 100—200 դրշ տա
րին վարժապետի և գրքի ստակ տալու
հայց ծնողքը ուրի ցարդեօք կը սոր
վին այս պարսաւելի ընթացք . ուս
կից կառնուն , կամք տմարդութեան
այս անդութ օրինակը , կը տեսնանք